

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ.

ՏՆՕԲԵՆ



Ա. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մայիսյանի միջն. դպրոց, 8-րդ դասարան
ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

դասղեկի ազգանունը, անունը
« 2 020---2021 » ուսումնական տարի

1. ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը) Դասարանը բաղկացած է տասներեք հոգուց՝ յոթ տղա, վեց աղջիկ: Աշակերտներից երկուսը ունեն գերազանց առաջադիմություն:

Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Անհատական աշխատանք է կատարվել ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Աշակերտները պատրաստակամ են, նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ակտիվ մասնակցել են համադպրոցական բոլոր միջոցառումներին:

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկել այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն):

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե՛ գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին պետք է ցուցաբերող ակտիվություն : Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոձեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը ր աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը զլոբալ է:

4. Դպրոց-ընտանիք կապը Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միննույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՄԱՌԻՄԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծում, նոր ուստարվա անելիքների ծրագրում	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2	Անկախության անգնահատելի դերն ինձ համար:	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3	Մաքրությունն՝ առողջության երաշխիք (գրույց հիգիենային կանոնների մասին)	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4	Հենրիկ Մալյան 95- ամյակ	Հոկտեմբեր 05.10.2020թ.	աշակերտ դասղեկ
5	Արմեն Զիգարխանյան 85 -ամյակ	Հոկտեմբեր 12.10.2020թ.	աշակերտ դասղեկ
6	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	Հոկտեմբեր 19.10.2020թ.	աշակերտ դասղեկ
7	Ավ. Իսահակյան 145 /բանաստեղծությունների ընթերցում/	Հոկտեմբեր 26.10.2020թ	աշակերտ դասղեկ
8	Միսաք Մեծարենց 135- ամյակ	Նոյեմբեր 16.11.2020թ.	աշակերտ դասղեկ
9	«Ընկերասիրություն և համերաշխություն» թեմայով գրույցը (գրել շարադրություն)	նոյեմբեր 23.11.2020թ.	աշակերտ դասղեկ
10	Գրիգոր Զոհրաբ 100 -ամյակ	Նոյեմբեր 30.11.2020թ	աշակերտ դասղեկ
11	Իմ վարքը տանը և շրջապատում	Դեկտեմբեր 07.12.2020թ.	աշակերտ դասղեկ
12	Երկրաշարժի գոհերի հիշատակի օր .Բնական աղետներ, ի՞նչ է երկրաշարժը: .Տվյալ բնակավայրում, տարածքում հնարավոր բնական աղետներ:	Դեկտեմբեր 14.12.2020թ.	աշակերտ դասղեկ
13	Ամանորյա զարդարանք դասարանում	Դեկտեմբեր 21.12.2020թ.	աշակերտ դասղեկ
14	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում :		աշակերտ դասղեկ

		դեկտեմբեր	
15	Պետրոս Դուրյան 170-ամյակ	հունվար	աշակերտ դասղեկ
16	Առնո Բարաջանյան 100 /ստեղծագործությունների ունկնդրում/	հունվար	աշակերտ դասղեկ
17	ա/Հայրենի՝ք,ես զարկն եմ քո բազկի: Հայոց բանակը 29 տարեկան է: բ/Պատասպարման և տարհանման գործնական աշխատանքներ:	հունվար	աշակերտ դասղեկ
18	Գիրքը իմ կյանքում	փետրվա	աշակերտ դասղեկ
19	Վ. Տերյան Բանաստեղծությունների ընթերցում	փետրվա	աշակերտ դասղեկ
20	Տեառնընդառաջ տոնի խորհուրդը	փետրվա	աշակերտ դասղեկ
21	Նշել Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք վնվիրելու օրը:	փետրվա	աշակերտ դասղեկ
22	Հայկական լեռնաշխարհում անցյալումտեղի ունեցած երկրաշարժերը:	մարտ	աշակերտ դասղեկ
23	Գարնանամուտ Նշել «Մայրության և գեղեցկության տոնը»	մարտ	աշակերտ դասղեկ
24	Երաժշտությունը իմ կյանքում	մարտ	աշակերտ դասղեկ
25	Պաշտպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը	մարտ	աշակերտ դասղեկ
26	Առողջ և անվտանգ ապրելակերպ	ապրիլ	աշակերտ դասղեկ
27	Նշել մայրության և գեղեցկության տոնը	ապրիլ	աշակերտ դասղեկ
28	Մուրբ գատիկ	ապրիլ	աշակերտ դասղեկ
29	ա/Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օր Մոմովառություն բ/ Գրիգոր Զոհրապ 160	ապրիլ	աշակերտ դասղեկ
30	Աշխատավորի միջազգային օր	մայիս	աշակերտ դասղեկ
31	Հաղթանակների ամիս մայիս:	մայիս	աշակերտ դասղեկ
32	Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանաշան, հիմն	մայիս	աշակերտ դասղեկ
33	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին:	մայիս	աշակերտ դասղեկ
34	Ամփոփիչ դաս:	հունիս	աշակերտ դասղեկ